

իրեն՝ յետոյ իր կարգակիցներուն: Մաղ-
թանքի տարափները կը տեղային նորա-
պսակներուն գլխուն: Բնութիւն բաժնել կը
թուէր հանդիսականներուն ցնծութիւնը:
Փարնան գալն աւետող, քիչ մը ցրտիկ,
բայց գեղեցիկ արեւ մը կը ճաճանչէր:
Սեղանին վրայ շարեցին պնակները, ար-
գանակ, մատաղի ընտիր կտորներ, ձուա-
ծեղ, հերիսայ, հաւալիցք, երէորսի խո-
րովածոյ, թանձր ու պաղուկ մածուն,
հատուկ (բրինձ փիլաւ) եւն. կը զարդա-
րէին սեղանը, գինին առատօրէն կը մա-
տրուակուէր. դէմքեր կարմրել, այտերը
վառուիլ, գլուխները բռնկիլ, ձայները բար-
ձրանալ, շարժումները յաճախել, այս
ամէնը բնականօրէն տեղի կ'ունենար:
Մէկ կողմէ շարական, միւս կողմէ շարգի
տեսքաւ, կը համեմէին հանդէսը: Սեղանը՝
պսակաղիւրը օրհնեց. « Հոգւոց » ի պէս
մաղթանք մըն ալ արտասանեց, պսակեալ-
ներուն ու մեր ընտանեաց անդամները մէ-
կիկ մէկիկ յիշատակելով կնքեց հացիկե-
րոյթը: Պսակաւորները յանցապարտի պէս
ոտքի վրայ. կոշնականները վերսկսան
իրենց գուարճութիւնները՝ անփոյթ ու ան-
տարբեր:

Սոյն օրը, նպաստաւոր օդէն օգտուելով,
մեր անձեզուն սրահին վրայ տարածեցին
կապերտներ ու մազէ խարաւներ, տանի-
քին եզերքը տնկեցին զօշակ մը. կտրիճնե-
րու խուճմը մը՝ մերթ ընդ մերթ ատրճանակ
կ'արձակէր: Փրգոռած գլուխները նոր նոր
խաղեր կը ստեղծէին: Բազմականներուն
մէջ հծծիւն մ'ընկաւ. ամէնքը նստած էին
բոլորածեւ, քիչ յետոյ 20-25 երիտա-
սարգներ կանգնեցան, ձեռք ձեռքի տուած,
պարել սկսան, պար մը գեղջկական, որ
աւելի կ'ողեւորուէր թմրկին դափնունովն
ու շեփորին գոչումովը: Ոտքերը զուգըն-
թաց ելեւէջներով, գլուխները համաչափ
շարժումներով կը կազմէին գեղջուկ պա-
րաւորներու պարը ու ճարտար արուեստին
ամբողջութիւնը: Պարը՝ հրապոյր էր բո-
լոր. մինչեւ ցայսօր կ'երեւակայեմ այդ
գեղջուկ հանդէսը, իր անսեթեւեթ պարով:
Սոյսպէս տեւեց ութ օր, մինչեւ որ պսա-

կաղիւր քահանան հանդիսաւորապէս լուծեց
կապերը պսակաւոր ամուլին. « հիւրերը »
քաշուած էին արդէն, կը մնային միայն
մենք. մեր տան մէջ աւելցած էր նոր ան-
դամ մը, մունջ ու քօղաւոր հարս մը:

Ու հիմակ որ կը զրեմ այս տողերը,
աւելի կը զգամ անդնդին պարապը, ուր
նետուած, հայրենի սահմաններէն հարիւ-
րաւոր մղոններ հեռու, ընտանեկան զը-
գուանքներէ՝ զուրկ, դատապարտուած եմ
սրտամաշ անձուկներ կրելու բանտի մը
խոժոռաղէմ որմերուն մէջ. զո՛ր երազելու
անհետացած տղայութիւնս, թունաւորուած
հաճոյքներս, խոյս տուած երջանկութիւնս.
հոս, անհաշտ ու մաշիչ միջավայրի մը
մթնոլորտին տակ, կը խոկամ ու կը հո-
գամ դերակորոյս ընտանիք մը. աւելին,
հիմայ որ ծաղրածու իրականութեան ճի-
ւրաններուն մէջ բռնուեր եմ, ինչպէս չյի-
շեմ, հոգիիս անկարելի կսկիծովն ու մտքիս
մրբկոտ երեւակայութեամբը, երբեմնի բա-
րեբաստիկ բնակարանը, ուր քառորդ դար
առաջ այդ հանդէսները կատարուեցան.
այն տունը, որ հիմայ ծխուն մոխրակոյտ
մըն է, վերջին մեծ հրդեհէն ի վեր: Կրնամ
մոռնալ հայրենի յարկս, ուր այսօր, այրի
մը կայ լալազին ու սգուոր, անտէրունչ
այրի կին մը, որ թագուհին եղած էր իմ
նկարագրած հարսնիքիս: Փանի՛ փորձեմ
հանել մտքէս այդ տրտում յիշատակները,
այնքան յաճախ արձանացած կը տեսնեմ
աչքիս առջեւ գիւղիս գերեզմանատունը.
ու կը հանդիպի ճամբուս վրայ գերեզմա-
նին փոսը, ուր յաւիտեան կը ընանայ եղ-
բայրս Գէորգ՝ հարսնիքին թագաւորը...:
Ո՛վ անողոր ու ամենաւեր ժամանակ.
քառորդ դարու մէջ այս քանի փոփոխու-
թիւն, ինչ աղետարեր քանդում...: Այս
է մարդը. այսօր կը ժպտի, վաղը կ'ան-
հետի, այսօր դափնիք, վաղը դժնիկ: Որ-
րան, սրսկապան ու տապան. ահա՛ երեք
դիմակներ, որոնց տակ կը խլրտի մարդու
կերպարանը. ու ասոնք են որ կը կազմեն
մարդկութեան անբաժան տարերքը, կեան-
քին երբեակ պայմանները:

Շարունակելի

ՌՈՒՍԱՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(ՍԿՋԲԻՑ ՄԻՆՁԵՒ 70 - ԱԿԱՆ ԹԻԱԿԱՆԸ)

ՊԱՏՄԱ - ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

(Շար. տես Բազմավէպ 1934, էջ 446)

ՎԱԹՍՈՒՆԱԿԱՆ ԹԻԱԿԱՆՆԵՐԻ ՌԷԺԻՍՈՐԸ

Ռէժիսորն ստեղծագործող արւեստագէտ
է: Նա է բեմի ամենապատասխանատու
և կենտրոնական դէմքը: Ոչ ոք չի կարող
ժխտել, որ ներկայացման յաջողութիւնը,
գեղարւեստական կերտածքը կախած է
նրա ստեղծագործական ձիրքից, նուրբ ճա-
շակից և ֆանտազիայից:

Ունեցել է հայ բեմի իսկապէս սէժիսօր
վաթսուական թւականներին:

Առհասարակ թէ՛ թիֆլիսի և թէ՛ Մոս-
կուայի հայ բեմերը չեն ունեցել իրենց
կոչման բարձրութեան վրայ կանգնած,
ստեղծագործող, նուրբ - հոգեբան ռէժիսօր-
ներ: Եղել են - միայն ղիլէտանտներ, պա-
տահական ռէժիսօրներ, որոնք պիէսները
մշակել և բեմադրել են այնպէս, ինչպէս
թելադրել է իրենց գեղարւեստական - բե-
մական սահմանափակ հասկացողութիւնը:
Աւելին: Հայ բեմի ռէժիսօրների մեծ մասը
եղել են աւելի շուտ կարգապահ - վե-
րահակիչներ: Նրանք թիւր հասկացողու-
թիւն ունենալով ռէժիսօրի նշանակութեան
և առհասարակ ռէժիսօրական արւեստի
մասին, չեն հետեւել դերասանների խա-
ղին, ուղղութիւն չեն տւել նրանց ար-
տասանութեանը, շեշտադրութեանը, չեն
վերացրել նրանց միջից կեղծ ձեւերը, չեն
պայքարել նոր ուղղութեան, նոր շփոյնի
համար: Հայ թատրոնի պատմութեան մէջ
զուրկ կը տեսնէք բազմաթիւ ռէժիսօրներ,
որոնք հիմնական, լուրջ պատրաստութիւն

չունենալով, խեղդում, մեղցնում են դե-
րասանների ստեղծագործական ընդունա-
կութիւնները: Ո՛վ չի յիշում Մարկոս
Աղաբէկեանի ռէժիսօրական կոմիդիան «Ա-
րուսեակ» պիէսը բեմադրելիս:

— Կասկած չկայ, - գրում է դերասան Սե-
ւումեանն իր « Զեկուցում » գրքոյկում (էջ
30), - ի հարկէ, որ շնորհալի, արժանաւոր
ռէժիսօրի նշանակութիւնը թատրոնում, ես
համարում եմ շատ մեծ, ճանաչում եմ նրան
արուեստագէտ, անպայման հոգեբան, ստեղ-
ծագործող ոյժ և ներկայացման գլխաւոր պա-
տասխանատու ղեկավար:

Ես միանգամայն հեռու եմ այն կարծիքից,
որ շատ միամիտներ ունին ռէժիսօրի մասին,
թէ՛ նա լաւ ճաշակով բեմ է սարքում, սա-
լօն ստեղծում. ոչ պարոններ, ռէժիսօրի կա-
տարելիք դերը շատ աւելի խորն է ու նշանա-
կալից, քան մի ճաշակով սալօնի սարքելը,
կամ կահ կարասիքով բեմ լցնելը: Ռէժիսօրը
ստեղծագործող է... Նա պիտի լինի այնքան
խոր հոգեբան, որ կարողանայ ամենանուրբ
կերպով ուսումնասիրել իւրաքանչիւր դերա-
սանի գլխաւոր երակը և աստիճանական ճիշտ
զարգացման ճանապարհով նպաստի թատրո-
նի, այս կողմէ կտիւ աշխատանքին, այդ կուլ-
տուրական - հասարակական մեծ ինստիտու-
տի բարգաւաճման:

Թատրոնի կենտրոնական հետաքրքրութիւնը
և ներքին բովանդակութիւնը կայանում է այն
գեղարւեստական գլուխ գործոցի մէջ, որ ստեղ-
ծում է դրամատուրգի, ռէժիսօրի և դերասա-
նական տաղանդների միացեալ աշխատանքից:
Գրամատուրգի և դերասանի միջնորդը - ռէ-

ժիսօրը կոչւած է հարթելու, կանոնաւորելու և դերասանական ստեղծագործութեան համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու:

Ռէժիսօրը պէտք է լինի ղեկավար, բայց երբեք ուսուցիչ... Կարելի բան է, որ մի բանաստեղծի — գրողի գլխին մի ուսուցիչ կանգնի և նրան գրել սովորեցնի:

... Ռէժիսօրի ցուցմունքները փորձերի ժամանակ իւր խաղով նոյնպէս նպատակաւոր մար չէ... Նա պարտաւոր է միշտ հաշի առնել իւրաքանչիւր դերասանի ամենամանր մանրամասնութիւններն անգամ, լաւ ուսումնասիրելով նրա հոգեբանութիւնը... Իւրաքանչիւր դերասան իր տեսակի է ստեղծած: Ռէժիսօրը պիտի գիտենայ, թէ ո՞ւմ, ի՞նչպէս մօտենայ և ի՞նչ ձեւով ցուցմունք տա: Սա շատ կարեւոր է »:

Մի ալ կարեւոր հանգամանք: Շատ յաճախ ռէժիսօր են նշանակւել դերասանները: Դերասան — ռէժիսօր: Դա ամենավտանգաւոր երեւոյթն է: Դերասանը նշանակւելով ռէժիսօր, նախ չի կարողանում լիովին նշել իր կոչմանը, իր պարտականութիւններին: Երկրորդ՝ նա շատ անգամ շահագործում է իր դիրքը, իր պաշտօնը, ստեղծում է անհատական գերիշխանութիւն, դերերը բաժանելիս չի լինում անաչառ, անկեղծ, մանաւանդ կանանց վերաբերեալ: Այդ տեսակէտից բնորոշ է վաթսուներկան թւականների հայ թատրոնի պատմութիւնը, ուր տեսնում ենք այնպիսի ռէժիսօրներ, որոնք կատարեալ բռնեցք են հանդիսացել դերասան — դերասանուհիների գլխին: Ահա թէ ինչու ռէժիսօրը պէտք է լինի ազատ արւեստագէտ: Պէտք է նա համապատասխանի իր վեհ կոչմանը, լիակատար կերպով տիրապետի իր պաշտօնին:

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ

Իսկական քննադատութիւնը դրամատուրգիայի և թատրոնի զարգացման խրթանն է: Թատրոնական կուլտուրան կարող է բարգաւաճել, զարգանալ միայն լուրջ, առողջ, անաչառ, բազմակողմանի և անխնայ քննադատութեամբ: Այդ տեսակէտից ի՞նչ է ներկայացնում վաթսու-

նական թւականների թատրոնական բննադատութիւնը: Լուրջ, գիտական հիմքերի վրայ դրած քննադատութիւն այնտեղ, որտեղ չէր գտնի: Իշխողը մակերեսային քննադատութիւնն է, սխեմատիզմը: Ժամանակի ռէցէնզիստները չունենալով գեղարւեստական լուրջ պատրաստութիւն, չեն կարողացել իրենց հարազատ գծերով լուսաբանել բեմադրւած պիէսները, բեմադրութիւնները: Չեն կարողացել քննադատել, մերկացնել թերութիւնները, բացել, սայթաքումները: Չեն կարողացել յաղթահարել քննադատական էստէրիզմը — «Արւեստն արւեստի համար» ուղղութիւնը: Նրանք աւելի շուտ արձանագրել են անհատական մօձէնտներ: Ահա թէ ինչու այդ քննադատութիւնը չի կարողացել նպատակ ժամանակի թատրոնական կուլտուրայի զարգացմանը: Այդպէս է պատկերը ոչ միայն վաթսուներկան, այլ և եօթնական թւականների: Դերասան Գէորգ Չմկեանը չափազանց մօայլ գոյներով է գծում մանաւանդ եօթնասունական թւականների քննադատութեան պատկերը: Ահա նրա վկայութիւնը.

— «Այն ժամանակուայ... «Մեղուն» մեր լեզուի ինքնակամ ընթերցանութիւնը Լաւ և յետոյ մէկ գաղափարից միւս գաղափարը թռչող Մշակը, միշտ այսպիսի քննութիւններ են տուել թատրոնական ներկայացումների մասին. «այս ինչ ներկայացումը անց կացաւ լաւ, այն ինչ ներկայացումը վատ»: Երբեմն պատահել են և քննութեան նման բաներ, բայց այդ տեսակ քննութիւնները միշտ շաղախուած են եղել մաղձով և լեղիով դէպի անձնականութիւնները, նաեւ Մշակի խմբագրութեան թատրոնական քննութիւնները, որ միշտ անցնելով մէկի ձեռքից միւսը, լի են եղել կամ զգոյշ գրուած շողորթութիւններով կամ զգուհի հայհոյանքներով և շատ անգամ մինչեւ այն աստիճան վիրաւորել են անձնականութիւններին, որոնցից էս, կարող եմ համարձակ խոստովանել, երբեմն հասել եմ ծայրահեղ յուսահատութեան, բայց միշտ զգուհի կրքից, տարել եմ համբերութեամբ նորա արբանեակների արձագանգները, խմբագրած երբեմն իրան Մշակի խմբագրի տաղան-

դաւոր գրչովը («Փորձ» 1877 տ. թ. 3, էջ 270) »:

Չնայելով բացասական այդ գծերին, անյուսամենայն, վաթսուներկան թւականների թատրոնական քննադատութիւնն առում է որոշ նաւահանգիստ. արձանագրում է ներկայացւած պիէսների պատկերը, բնորոշում է և դրատում դերակատարների յաջողութիւնները, պախարակում հասարակութեան սառը, անտարբեր վերաբերմունքը և առաջադրում նոր ձեւեր թատրոնը վերակառուցելու և աւելի լաւ, առողջ հիմքերի վրայ դնելու համար:

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՌԵՊԵՏՈՒԱՐԸ

Թատրոնական ասպարիզում ռէպէրտուարի մշակումն ամենադժուար և ամենապատասխանատու գործն է, որին պիտի կենտրոնական տեղ տալ: Բաւական չէ զբաղւել միայն թատրոնական ձեւերի որոնումներով, կարեւոր է ամէնից առաջ գծել բովանդակութիւնը, ռէպէրտուարը Ռէպէրտուարն է, որ բարձրացնում է հասարակութեան կուլտուրական մակարդակը, զարգացնում է նրա երեւակայութիւնը, ազնւացնում գեղարւեստական ճաշակը և ուղղութիւն է տալիս նրա աշխարհայեացքին:

— Շատ յաճախ կարելի է մատնանշել, — գրում է դերասան Սեւոմեանն իր «Զեկուցում» գրքովում (էջ 24, 1913 թիֆլիս), — ռէպէրտուարի մէջ տեղ գտած այնպիսի պիէսների վրայ, որոնք փչացնում են հասարակութեան երեւակայութիւնը, ճաշակը, զարգացնում նրա մէջ վատ բնազդներ և շատ յաճախ էլ վիրաւորում ժողովրդի ինքնասիրութիւնը: Սրանք շատ վտանգաւոր խնդիրներ են և երբեք անհետեւանք չեն անցնում:

Այդ տեսակէտից ահա անհրաժեշտ է պիէսների խիստ ընտրութիւն կատարել:

ՌՎԵՐ են ղեկավարում, սակայն, վաթսուներկան թւականների ուսումնական թատրոնի ռէպէրտուարի ամենապատասխանատու գործը:

Ռէպէրտուարի չափազանց պատասխանատու գործի ղեկավարութիւնն իրենց ձեռքն

են առնում թատրոնական կօմիտէի անդամները և իրենց գեղարւեստական ճաշակի, իրենց գրական քաղաքական հասկացողութեան համաձայն կազմում են թատրոնական ռէպէրտուարը: Այդ ռէպէրտուարի միջոցով էլ նրանք թատրոնը ծառայեցնում են իրենց գաղափարների, իրենց իդէոլոգիայի և աշխարհայեցողութեան տարածմանը:

Այստեղ արձանագրենք և այն, որ թատրոնական այդ մասնաժողովներին կից չեն եղել ռէպէրտուարական յանձնաժողովներ, որոնք միանալով թատրոնի վարչութեան հետ, կազմէին ռէպէրտուարի պլանը և ընտրւած պիէսներն ենթարկէին հասարակութեան քննադատութեանը:

Սակայն ի՞նչ է ներկայացնում վաթսուներկան թւականների ուսումնական թատրոնական գրականութիւնը, ի՞նչ պիէսներ են բեմադրւում և գլխաւորապէս ի՞նչ ուղղութիւն, ի՞նչ շկուա է գերիշխում:

Թատրոնական գրականութիւնը ուսումնայեւրի մէջ հէնց սկզբից կանգնում է երկու տարբեր գծի վրայ. շինծու, անբովանդակ պատմական ողբերգութիւնների հետ առաջ է գալիս կենցաղային կատակերգութիւնը: Երկու տարբեր դպրոց, երկու հիմնական ուղղութիւն զարկ են տալիս վաթսուներկան թւականների դրամատիկական գրականութեանը: Բեմադրւում են երկու տարբեր բովանդակութեամբ պիէսներ. պատմական ողբերգութիւններ և կենցաղային կատակերգութիւններ:

Պատմական ողբերգութիւններ: Պատմական, աւելի ճիշտ՝ կեղծ դասական ողբերգութիւնների նիւթը հայոց պատմութիւնն է: Այդ պիէսները, առանց բացառութեան, վերցւած են պատմական հեռաւոր, մութ, չուսումնասիրւած անցեալից: Այնտեղ հանդէս են գալիս հայ թագաւորները, նախարարները, իշխաններն ու զօրավարներն իրենց արշաւանքներով և հերոսամարտերով: Դրամատիկական հերոսներն են Մամիկոնեան, Բագրատունեան, Կամսարական և Ռուբինեան իշխաններն ու նրանց կանայք՝ իրենց պատմական տարազներով:

նրա ընտանեկան մթնոլորտը: Պէտք էր մերկացնել, մտրակել, հարւածել այդ ախտաւոր երեւոյթները: Պէտք էր անխնայ պայքարել հասարակական կեանքը թունաւորող կենցաղի, անտիապաշտութիւնների և բուրժուական բարոյականի դէմ: Ահա այդ գիտակցութիւնն է ոգեւորում և համակում ժամանակաշրջանի զրամատուրգներին: Եւ նրանք նկարում են, մերկացնում հասարակութեան տարբեր խաւերի արատները, ըննադատում և ծաղրում են գլխաւորապէս վաճառական դասի ու պետական պաշտօնեաների կեղեցումները,

հարստահարութիւնները: Նրանք վրձնում են վաճառականին, աստիճանաւորին, արհեստաւորին, ինչպէս և ժողովրդի ստորին խաւի տիպերին: Այդ բոլորը տեսնում էք դուք բեմի վրայ. լսում հասարակական տարբեր տիպերի խօսակցութիւնը, ծանօթանում նրանց աշխարհայեացքի և կենցաղի բնորոշ ու առանձնայատուկ գծերի հետ: Հէնց այդտեղ էլ կայանում է պատմաշրջանի զրամատուրգների արժէքը:

Թէ որո՞նք են այդ թատերագիրները՝ կը տեսնենք յաջորդով:

(Շարունակելի)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԴԵՐԸ — Մ. Ռ. Ն. Ա. ՄՈՒՐԱՏԵԱՆ 25ԱՄԵԱՅ ՅՈՒՆԵԼԵԱՆԸ — ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ Կ'ԱՅՅԵԼԵՆ՝ Ա. - ԲԱՐԻՋԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՊՐԵ. ՊԻՔԱ. Բ. - ԾԻՐԱՆԱՌՈՐ ՎԵՐՏԻԷ ԵՒ ՆԱԽԱՐԱՐ Լ. ՄԱՐԷՆ, Գ. - ԿԱԹ. ՊԱՏՈՒԻՐԱԿ ԳԱՐԵԳԻՆ Ս. — ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄՆԵՐ ՄՈՒՐԱՏԵԱՆ ԵՒ Մ. - ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՁ (ՍԵՒՐ — ՎԵՆԵՏԻԿ):

Վերջին ձմրան ընթացքին եւս Սեւրի Սամուէլ Մուրատեան վարժարանն ունեցաւ գովելի գործունէութիւն մը իր շքեղ յարկին տակ կազմակերպելով հանդէսներ և պաշտօնական հիւրերու ի պատիւ բազմաթիւ ընդունելութիւններ: Այս բոլորին, բարիզահայութեան հարազատագոյն մեծամասնութիւնն ու վարժարանին ֆրանսացի բարեկամները արդար հպարտութեամբ ու համակրանքով մասնակցեցան:

Հակառակ ամէն կողմ տիրող ազգային տխուր երկպառակումներուն, Մուրատեան վարժարանին մէջ բոլորող հաւաքոյթները պահեցին միշտ իրենց լաւագոյն արժանիքներէն մին եղող համերաշխութիւնն ու համագային բնոյթը: Երեւոյթ մը որ եզական է առ հասարակ մեր ազգային կեանքին մէջ և որուն համար շատ բան ենք պարտական Մուրատեան վարժարանի Տեսչութեան: Վեր. Միւրթարեան Հայրերու գործունէութիւնը և ազդեցութիւնը վաղուց արդէն չբաւականանալով իրենց խնամքներուն յանձնուած մատող սերունդին զաստիարակութեան պահանջած ան-

թիւ հոգերով՝ անցած են շատ աւելի կարօտ գետնի մը վրայ՝ որ է գաղութահայութեան մտային բարձրացումն ու զարգացումը: Իրենց այս գործունէութիւնը նուազ նշմարելի է անշուշտ, բայց կը դիմէ իր նպատակին՝ լոյն և յամբօրէն տարածուելով ամէն կողմ: Կարելի է ապրիլ Միւրթարեան հաստատութեան մը մօտ, յաճախել այդ յարկը, մասնակցիլ անոր կեանքին առանց զգալու հոն ապրողներուն հետեւելու, նոյնանալու, ստիպողական պահանջը. և այսպէս անզգալիօրէն կը փոխուին յաճախ անտեղի սեւեռումներով պաշարուած մտքեր, կը բարեփոխուին շարժելու և խօսելու ձեւեր, նոր հիմերու վրայ կը հաստատուին եղբայրական զգացումներ, կը ծնի ազգային անցեալին, գրականութեան ու լեզուին մասին լայն և անկողմնակալ գիտակցութիւն: Կը փոխուին անհատները և կը հասնի ժամը ուր ինքնին տարբեր կերպարանք ստացած կը ներկայանայ այդ անհատներու կազմած զանգուածը:

Միւրթարեան գործունէութեան այս ճիւղ-

ղին մէջ Մուրատեան վարժարանը արդէն իսկ գնահատելի աշխատութիւն է թափած. վերջնական և ամբողջական արդիւնքը ժամանակի հարց է լոկ, և վստահօրէն ձեռք կը բերուի այդ ալ՝ եթէ իրազեկ և գիտակից բարիզահայութիւնը միացնէ իր ջանքը Միւրթարեան Միարանութեան անթիւ զուհողութիւններուն՝ ապահովելու համար մանուկ սերունդներու դաստիարակութեան և ազգային վերելքի Ֆրանսայի մէջ միակ հնոցն եղող Մուրատեան վարժարանի գոյութիւնը:

23 Դեկտեմբեր 1934 — Մուրատ-Ռաֆայէլեան Լախիկն Աշակերտաց Միտքեան Քսենէիկըզմեայ Յորեկեան:

Միւրթար Արքայ Նախախնամութեան նուիրակն է, հիմնադիրն ու կերտողը այն հսկայ վերելքին որուն նմանը ոչ մէկ ժողովուրդ ունեցած է իր անցեալին մէջ, երբ նկատի առնուին և համեմատուին կատարուած յեղաշրջումն ու տուեալ պայմանները: Միւրթարայ ոգին է դարձեալ որ անցնելով իր յաջորդներուն մէջ պանծացուցած է ազգասիրութեան և գիտութեան զգացումները և նոյն ոգով տոգորուած իր աշակերտները դարերէ ի վեր անխոնջ արշաւով կը դիմեն դէպի այդ զոյգ նուիրական նպատակները:

Հեռաւոր Հնդկաստանէն Ռաֆայէլ և Մուրատ՝ իրազեկ Ս. Ղազարու միարաններուն ազգանուէր գործունէութեան և տարուած ազգապահպանման ազնիւ տենչով՝ Միւրթարեան Հայրերուն կը յանձնէին իրենց հարազատներուն հոգեկան և մտաւոր դաստիարակութեան հոգը: Այսպէս, Հ. Նիկողայոս և Հ. Պօղոս կը մտնէին Ռաֆայէլի և Մուրատի մտերմութեան մէջ և բաւ է վայրկեան մը միայն դառնալ անցեալին, վերադարձի իրենց մօտ, լսել իրենց հայրենացաւ սրտերու իղձերն ու փափաքները՝ միանգամ ընդ միշտ համոզուելու համար թէ Ռաֆայէլ և Մուրատ օգտուեցան Միւրթարեանց ներկայութենէն աւելի քան իրենց զաւակները, եղան Միւրթարեան աշխարհական երկու առաջին աշա-

կերտները և իրագործեցին Մուրատ-Ռաֆայէլեան Հաստատութիւններու զաղափարը՝ որոնց անունով այսօր արդար հպարտութեամբ կ'անուանենք ազգօգուտ և պատուաբեր սերունդներու անընդհատ շարք մը:

Կառուցուած այդ զոյգ Հաստատութիւնները կը լրացնէին Միւրթարայ ծրագրին դաստիարակչական մասը. և յաջորդները կրկնապատիկ եռանդով իրենց հայագիտական գործունէութեան կը միացնէին հայ երիտասարդ սերունդին դաստիարակութեան գործը, որուն մէկ դարու փայլուն արդիւնքով պէտք է հրճուին բարեբարնեւրու մեծ հոգիները:

Մուրատ-Ռաֆայէլեան Նախկին Աշակերտաց Միւրթեան Նախագահ, Տօքթ. Կ. Խանճեանի բացման խօսքէն վերջ, Ատենադպիր Պր. Մ. Ալէմշահ հմուտ և փաստալից ճառով մը ի վեր հանեց Բարեբարներու յիշատակը և ըրաւ պատմականը Մուրատ-Ռաֆայէլեան Հաստատութիւններուն և անոնց աշակերտներու, որոնց գեղեցիկ համաստեղութեան մէջ շքեղօրէն կը փայլին Փորթուրալ, Սազըզ, Եագուպ Արթին Փաշաներ, Պըյըզլեաններ, Պէշիկթաշլեաններ, Թէրզեաններ, Վարուժաններ, Աղամեաններ, Դաւիթեաններ եւն: Եւ որքան աւելի հպարտութեամբ կը յիշուին այդ դէմքերը, որքան աւելի երախտապարտ մեծարանքով կը կապուին սրտերը Միւրթ. Միարանութեան՝ երբ իրենց ազգօգուտ գործունէութեան իրեւ ապացոյց այսօր իսկ ազգային և նոյն իսկ միջազգային գիտութեան և զեղարուեստի ճիւղերու մէջ հըպարտութեամբ կը դիտենք Մ. - Ռաֆայէլեան ուժերու վերելքը:

Մուրատեան Վրժնի. Տեսուչ, Վեր. Հ. Սահակ Վ. Տէր-Մովսէսեան, հանդիսաւորութեան երրորդ բանախօսն եղաւ: Բարիզահայութիւնը միշտ համակրութեամբ և ամենամեծ հաճոյքով կը հետեւի անոր խօսքերուն, որոնք ամէն առթիւ հայ պատմութեան ապացոյցներով յոյս և քաջութիւն կը ներշնչեն ամենավատ սրտերու իսկ և ցոյց կու տան ազգին փրկութեան միակ